ԷՆԵՐԳԵՏԻԿ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ «ԴԵՐԸ» ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Արմեն Մանվելյան

Էներգետիկ խնդիրը և, ընդհանրապես, էներգետիկ անվտանգության հարցը վաղուց արդեն դարձել է համաշխարհային գլոբալ քաղաքականության բաղկացուցիչ մասը: Հասկանալու համար այդ քաղաքականության ազդեցությունը՝ պետք է նախնառաջ ըմբռնենք այն ծնող պատճառները և քաղաքական այն շահերը, որոնք փնտրում է աշխարհի այս կամ այն տերությունը:

Հարավային Կովկասը, Կասպից ծովի ավազանը և Միջին Ասիան վաղուց արդեն գլոբալ քաղաքականության ուշադրության կենտրոնում են: Արևմուտքն այս տարածաշրջանները, որպես կանոն, դիտարկում է իբրև մի միասնական անքակտելի շղթա, որը կարելի է վերահսկել միայն իր ամբողջության մեջ: Այս ենթատեքստում կարևոր նշանակություն ունի, հատկապես, նավթի և գազի գործոնը: Տարածաշրջանում վերահսկողություն սահմանելու համար տերությունները դիտարկում են հենց էներգետիկ բաղադրիչի նկատմամբ վերահսկողության հաստատումը: Հասկանալի է, որ այս պայմաններում տարածաշրջանի երկրները, հատկապես նավթ և գազ արտահանող, փորձում են կարևորել սեփական դերակատարումն իրենց տարածաշրջանային պայքարում: Այս պայմաններում, հատկապես, կարևոր է համաշխարհային նավթային քաղաքականության և ընդհանրապես այդ բնագավառում կուտակված գիտական մտքի ուսումնասիրությունը: Միայն այդ դեպքում կկարողանանք հստակ պատասխան տալ, թե քաղաքական ինչ կանոններով է կատարվում այն խաղը, որը կոչվում է պայքար նավթային հոսքերը վերահսկելու համար: Պետք է հնարավորինս իրական ճշգրտությամբ հասկանալ, թե Հայաստանի վրա ինչ ձևով է ազդում էներգետիկ քաղաքականություն կոչվածը, ուսումնասիրել ոչ միայն այդ քաղաքականությունը, այլ նաև հասկանալ նրա ուժեղ և թույլ կողմերը: Իսկ այդպիսիք, այսինքն և՛ ուժեղ, և՛, հատկապես, թույլ կողմեր, կան: Նման ուսումնասիրության դեպքում միայն հնարավոր կլինի պատասխանել, թե արդյոք նավթը և, ընդհանրապես, էներգետիկ պաշարների առկայությունն այս կամ այն երկրի համար բարիք են, թե չարիք:

1. Բնական ռեսուրսների ազդեցությունների քաղաքական բաղկացուցիչը

Ինչպե՞ս են բնական ռեսուրսներն ազդում քաղաքական համակարգերի վրա: Այս հարցը, թերևս, արևմտյան գիտական շրջանակների կողմից ամենաուսումնասիրված թեմաներից մեկն է: Հայտնի քաղաքական ճշմարտություն է, որ, որպես կանոն, այն երկրները, որոնց ներքին համախառն արդյունքի մեջ բնական ռեսուրսների գործոնը՝ հատկապես էներգակիրների, 30% է և ավելի, ապա դա ուղղակիորեն ազդում է նաև այդ երկրների քաղաքական համակարգերի վրա: Կարելի է ասել, որ չնչին բացառությամբ էներգակիրների և նմանատիպ այլ ռեսուրսների տիրապետող երկրներում, որպես կանոն, բռնատիրական քաղաքական համակարգեր են գործում: Արդյոք սա պատահականությո՞ւն է, թե՞ «ռեսուրսային գործոնի» ազդեցություն:

Նման երկրները նաև աչքի են ընկնում քաղաքական անկայունությամբ և բռնատիրական ռեժիմների հաճախակի փոփոխությամբ: Քաղաքագետների և պատմաբանների համար կարծես թե աքսիոմա է դարձել նաև այն տեսակետը, որ «այնտեղ, որտեղ կա նավթ, չկա ժողովրդավարություն» [1, pp. 325-361]: Հավանաբար, դա է պատճառը, որ բնական ռեսուրսներով հարուստ երկրներում այդ պաշարները, և հատկապես նավթը, դիտարկվում է ոչ թե բարիք, այլ չարիք, որը միայն պատերազմներ, անկայունություն և աղքատություն է բերում: Համաշխարհային պատմության ընթացքում բազմաթիվ են դեպքերը, երբ որևիցե երկրում նավթի հսկայական պաշարների հայտնաբերումից հետո այդ երկրի տնտեսությունը ոչ թե աճ, այլ ընդհանուր տնտեսական և դրանից բխող քաղաքական հետընթաց է գրանցել: Օրինակ՝ Նիգերիայում նավթ հայտնաբերելուց և դրա կոմերցիոն արդյունահանումն սկսելուց հետո աֆրիկյան այդ երկիրը, որը նախկինում տարածաշրջանի գյուղատնտեսական ապրանքների թիվ 1 արտահանողն էր, սկսեց հետընթաց ապրել, ինչի արդյունքում ոչ միայն ամբողջովին ոչնչացավ Նիգերիայի գյուղատնտեսությունը, այլև այն հայտնվեց Աֆրիկայի ամենաաղքատ երկրների շարքում: Վերջին 25 տարիների ընթացքում Նիգերիան նավթի վաճառքից ստացել է մոտ $300 մլրդ-ի օգուտ, սակայն, չնայած դրան, նրա բնակչության 60%-ի եկամուտներն օրական հազիվ կազմում են $2: Իսկ բնակչության, միջին շնչի հաշվով, եկամուտները 80-ական թթ. $800-ից ընկել են՝ հասնելով մինչև $300-ի [2, c. 13]: Բոլիվիայի և Վենեսուելայի պես գազով ու նավթով հարուստ երկրները մինչև օրս չեն կարողանում դուրս գալ աղքատության ճիրաններից: Նավթի հարցով զբաղվող միջազգային կառույցների համար պարզ է, որ էներգակիրներով հարուստ երկրները, որպես կանոն, այդպես էլ չեն կարողանում նավ-

թային եկամուտները վերածել իրենց քաղաքացիների կենսամակարդակի բարձրացման համար կարևորագույն գործոնի: Այսպես՝ նավթով հարուստ 48 երկրների կեսից ավելին (որոնց արտահանման ծավալում՝ 1965-1995թթ. նավթը կազմել է ընդհանուր ծավալի նվազագույնը 30%-ը), ըստ ՄԱԿ տարեկան զեկույցի, գտնվում է ամենաաղքատ երկրների շարքում [2, c. 4]: Այս ցանկից միայն Նորվեգիան և Կանադան են գտնվում հարուստ երկրների շարքում, սակայն նկատենք, որ նրանք այդ հաջողությանն էին հասել դեռ մինչև նավթից ստացվող եկամուտների աճը:

Oxfam կազմակերպության կատարած հետազոտությունները ցույց են տվել, որ նավթային և բնական այլ ռեսուրսների վրա հիմնված տնտեսություն ունեցող երկրներում աղքատությունը ոչ միայն չի կրճատվում, այլև շատ դեպքերում ավելանում է [3]: Ըստ Մայքլ Ռոսի, որը երկրների տնտեսական և քաղաքական համակարգերի վրա բնական ռեսուրսների ազդեցության թեմայով մի շարք հետազոտությունների հեղինակ է, նավթի ու ընդհանրապես բնական ռեսուրսների գործոնը պատճառ է ոչ միայն աղքատության, այլ նաև աշխարհի շատ երկրներում ընթացող քաղաքացիական պատերազմների: Մ.Ռոսը գրում է, որ «մի շարք ուսումնասիրությունների համաձայն՝ բնական ռեսուրսների արտահանումից մեծապես կախված պետությունը, որպես կանոն, «տառապում» է քաղաքացիական պատերազմներից»: Նա նաև նշում է, որ «ցանկացած տիպի բնական ռեսուրս, ինչպես, օրինակ, նավթը, ադամանդը և այլն, եթե գերակշռում է երկրի տնտեսության մեջ, ապա դա նշանակում է, որ երկիրը գնում է դեպի քաղաքացիական պատերազմ» [4]:

Նավթային և բնական այլ ռեսուրսներից կախվածություն ունեցող երկրների ներքաղաքական կայունությունն ամբողջովին պայմանավորված է բնական ռեսուրսների արտահանման ծավալներով և միջազգային շուկայում դրանց գների մակարդակով: Այսինքն, երբ բնական ռեսուրսների գները բարձր են, այդ երկրներում տիրապետող ռեժիմները կարող են իրենց հանգիստ զգալ, սակայն բավական է, որ միջազգային շուկաներում նավթի, ադամանդի կամ բնական այլ ռեսուրսի գինն ընկնի, այդ երկրներում կսկսվեն քաղաքական անհնազանդության դրսևորումներ, ընդհուպ մինչև քաղաքացիական պատերազմ և քաղաքական վարչակազմի փոփոխություն: Օրինակ՝ ժամանակին, միջազգային շուկաներում բնական ռեսուրսների գների անկման շրջանում, նման անկայունություններ և քաղաքական ռեժիմների փոփոխություններ են տեղի ունեցել Նիգերիայում, Վենեսուելայում, Իրանում, Իրաքում, Ալժիրում և այլ երկրներում: Նման կախվածությունը բնական ռեսուրսներից, ըստ Կարլա Թերիի, բացատրվում է միջազ-

գային շուկաներում այդ ռեսուրսների գների հաճախակի փոփոխությամբ [5]: Այսինքն, երբ ռեսուրսների, մասնավորապես՝ նավթի գները միջազգային սակարաններում բարձր են լինում, այդ հումքից գերեկամուտներ ստացող երկրներն սկսում են ավելացնել իրենց պետական ծախսերը: Մասնավորապես՝ սեփական ժողովրդի լոյալությունը գնելու համար բարձրացվում են թոշակները, աշխատավարձերը, սոցիալական այլ ծախսեր են ավելացվում պետական բյուջեում և այլն: Սակայն բնական ռեսուրսների գները, որպես կանոն, փոփոխական են, և դրանց անկման դեպքում նախկինում հայտարարված ծախսերի նվազեցումը բերում է քաղաքական և սոցիալական դժգոհությունների ու, նույնիսկ, սոցիալական պայթյունի:

Նման իրավիճակից խուսափելու համար բնական ռեսուրսներ արտահանող երկրները գների անկման շրջանում ստիպված են լինում արտաքին մեծ պարտքեր անել, ինչն էլ բերում է նրանց կախվածության մեծացմանը միջազգային ֆինանսական կառույցներից: Նույնիսկ նավթ և նավթամթերք արտահանող այնպիսի հսկաներ, ինչպիսին են Սաուդյան Արաբիան և Քուվեյթը, ունեն արտաքին ու ներքին հսկայական պարտք [5, c. 30]: Նրանք ստիպված են դիմել նման քայլի, քանի որ դա միակ ձևն է նավթի գնի անկման ժամանակ թե՛ բնակչության և թե՛ երկրի քաղաքական ու զինվորական ընտրանու շրջանում դժգոհությունները լռեցնելու համար: Օրինակ՝ անցած դարի 70-80-ական թթ. նման իրավիճակ ստեղծվել էր *OPEC-ի* անդամ շատ երկրներում: 70-ական թվականներին, երբ նավթի գներն աննախադեպ բարձր էին, վերջիններիս ներքին ծախսերի տարեկան աճը կազմում էր մոտ 45%, իսկ, օրինակ, Վենեսուելայինը՝ 75% [2, c. 10]: Այսինքն՝ նավթից և բնական այլ ռեսուրսներից ստացվող հսկայական եկամուտները շատ դեպքերում բերում էին նրան, որ այդ երկրների դրամական միջոցների սղաճը տարեկան հասնում էր 25%-ի: Էժան վարկային միջոցները հնարավորություն էին տալիս այդ երկրներին հսկայածավալ և թանկարժեք ներդրումներ կատարել: Եվ ինչպես նշեցինք, միջազգային հումքային սակարաններում գների անկման դեպքում նման երկրներում առաջանում են տնտեսական և, հետևապես, ներքաղաքական լուրջ ճգնաժամեր: Միջազգային վերլուծաբանները դա համարում են պետական եկամուտների վատ կառավարման հետևանք, իսկ տնտեսագետները այն որակում են որպես «հոլանդական» հիվանդության դրսևորում (վերը նշված իրավիճակը տեղի ունեցավ նաև Հոլանդիայում, երբ անցյալ դարի 60-ական թթ. այնտեղ գազի պաշարներ հայտնաբերվեցին, ինչը հսկայական լրացուցիչ եկամուտներ բերեց):

2. Նավթային գործոնը և ձևավորվող նոր պետությունները

Վերը նշված քաղաքական իրավիճակը սպառնալիք է ներկայացնում հատկապես նոր ձևավորվող պետական միավորումների համար: Թվարկված հիվանդությունների բոլոր ախտանիշերով են տառապում այսօր ԱՊՀ տարածաշրջանի ռեսուրսներով հարուստ երկրները և հատկապես Ղազախստանն ու Ադրբեջանը: «Նավթային եկամուտների ավելացումը դեռ չի նշանակում հարստության ավելացում»,- ասում է Նորվեգիայի կենտրոնական բանկի ղեկավար Սվեյն Գեդրեմը [2, c. 11]: Իսկ Նորվեգիայի կենտրոնական բանկի ղեկավարի կարծիքի հետ պետք է հաշվի նստել, քանի որ Նորվեգիան ու Կանադան այն բացառիկ երկրներից են, որոնց տնտեսությունը չքայքայվեց նավթային աննախադեպ եկամուտների աճից: Սակայն, ըստ շատ փորձագետների, նորաստեղծ պետությունները հետևում են ոչ թե Նորվեգիայի օրինակին, այլ քայլ առ քայլ կատարում են այն սխալները, որոնք հատուկ են ասիական, աֆրիկյան և լատինաամերիկյան պետություններին:

Այսպես կոչված բնական ռեսուրսներով հարուստ երկրների կառավարությունները, ի տարբերություն «նորմալ» երկրների, իրենց հաշվեկշռում ունեն հաստատագրված եկամտի աղբյուրներ, ինչը նրանց հնարավորություն է տալիս կատարել իրենց համար «բարենպաստ» տնտեսական ու քաղաքական գործունեություն՝ հաշվի չառնելով բնակչության կամքը: Նման երկրներում, որպես կանոն, հարկերը շատ ցածր են կամ ընդհանրապես վերացված են: Այսինքն՝ իշխանությունները կարիք չունեն հարկերի միջոցով բյուջեն լցնելու խնդիր լուծել, քանի որ անհրաժեշտ ֆինանսական մուտքերը կատարվում են բնական ռեսուրսների արտահանման ու դրանցից ստացվող հաստատագրված եկամուտների հաշվին: Այդ պետությունները դադարում են կատարել իրենց կարևորագույն՝ հավաքման և կարգավորման գործառնությունները՝ զբաղվելով միայն բաշխման գործընթացով: Չստանալով հարկեր երկրի ներսում գործող տնտեսվարող սուբյեկտներից և ֆիզիկական անձանցից՝ բնակչությունից, այդ երկրների իշխանությունները դադարում են նաև նրանց առջև հաշվետու լինելուց ու իրենց գործունեությունը ներկայացնելու անհրաժեշտությունից: Այսինքն՝ դադարում է գործել պետական ապարատի գործունեության թափանցիկության սկզբունքը, ինչը կարևորագույն պայման է ժողովրդավարական համակարգերի համար: Իսկ պետական ապարատի գործունեության թափանցիկության վերացումը հատուկ է քաղաքական բռնատիրական համակարգերի վրա ստեղծված պետություններին: Միաժամանակ այդ պետությունները կախվածության մեջ են հայտնվում նավթային անդրազգային ընկերություններից, որոնց առջև էլ շատ դեպքերում ստիպված են հաշվետու լինել իրենց

գործունեության ընթացքում: Քաղաքական այս գործընթացն այսօր տեղի է ունենում նաև Կասպյան ավազանից նավթ ստացող երկրներում՝ Ղազախստանում, Ադրբեջանում և Թուրքմենստանում: Այսինքն՝ նավթի և գազի գների աննախադեպ բարձրացման հետ միասին այդ երկրների իշխանական ողջ համակարգը հայտնվում է կախվածության մեջ անդրազգային հսկաներ «Գազպրոմ»-ից, «Բրիթիշ փեթրոլիում»-ից, «Էքսոն մոբիլ»-ից, «Շևրոն»-ից, «Լուկոյլ»-ից և նմանատիպ այլ ընկերություններից ու նրանց թիկունքում կանգնած տերություններից: Էներգակիրների աննախադեպ թանկացումն էլ ավելի է հզորացնում այդ երկրների իշխանություններին՝ կրճատելով նրանց կախվածությունը ներքաղաքական զարգացումներից և արգելակելով ժողովրդավարական գործընթացի ցանկացած դրսևորում ու հնարավորություն նմանատիպ պետություններում:

3. Նավթային գործոնի ազդեցությունը Ադրբեջանի քաղաքական համակարգի վրա

Վերը նշված գործընթացներն իրենց ազդեցությունն են ունենում նաև մեր հարևան Ադրբեջանի վրա, ինչը, հատկապես, կարևոր է հասկանալու համար ոչ միայն այդ երկրում ներքաղաքական զարգացումները, այլ նաև այն ազդեցությունը, որ էներգակիրների արտահանման ծավալի աճի հետ միասին կրում է նաև Ադրբեջանի արտաքին ու ներքին քաղաքականությունը: Այսպես, 1994թ. աշնանը՝ հայտնի «Դարի պայմանագրի» կնքումից հետո, այդ երկրում Հեյդար Ալիևի իշխանության օրոք նորից սկսեց վերածնունդ ապրել նավթային ոլորտը, ինչն Ադրբեջանի հիմնական հարստությունն է:

Ադրբեջանցիներից շատերը համոզված են, որ նավթը նաև երկրի հզորության հիմքն է, սակայն արդյո՞ք դա այդպես է: Այսպես՝ 1994-ից մինչև 2005-ը այդ երկրի նավթային տնտեսության մեջ ներդրվել է մոտ $13.6 մլրդ [6]: Այս ներդրումների առյուծի բաժինը՝ $9.5 մլրդ, կատարվել է Ադրբեջանի նավթային սեկտորի հավանաբար միակ հեռանկարային հանքահորում՝ այսպես կոչված, Ազերի-Չիրաք Գյունեշլի նավթային դաշտում: Այստեղից 2004-ից արդեն սկսել է նավթ հոսել դեպի միջազգային շուկա՝ այդ երկրում նավթի արդյունահանման ծավալը 2005թ. հասցնելով մինչև տարեկան 22 մլն տոննայի [7]: Ըստ նույն աղբյուրների՝ 2004թ. Ադրբեջանի ածխաջրի արտահանման ծավալները կազմում էին ընդամենը 15.5 մլն տոննա, այսինքն՝ աճը մեկ տարվա ընթացքում կազմել է մոտ 42.9% [7]:

Այսպիսով, եթե դեռ 1997թ. Ադրբեջանի արտահանման ծավալում նավթը և նավթամթերքը կազմում էին ընդհանուրի 61%-ը, ապա արդեն 2002թ. այդ թիվը հասավ 88%-ի [2, c. 118]: Իսկ ոչ նավթային մթերքների

արտահանման ծավալը կրճատվեց 38.6%-ից մինչև 8.7%-ի: Այսինքն՝ կարող ենք եզրակացնել, որ Ադրբեջանում տեղի է ունենում այն տնտեսական էֆեկտը, ինչ ժամանակին նավթով հարուստ մի շարք երկրներում. այսինքն՝ նավթամթերքի արտահանման ծավալների մեծացումը բերում է տնտեսության մյուս ճյուղերի ոչնչացման: Այսպես, ըստ Ադրբեջանի վիճակագրության ծառայության տվյալների՝ ալյումինի արտադրությունը 1990թ. 238 հազար տոննայի փոխարեն 1999թ. կազմեց 76 հազար տոննա: Տեքստիլ արտադրությունը 150 մլն մ^2-ից նվազել է մինչև 0.8 մլն մ^2-ի տարեկան, պահածոյացված մթերքների արտադրության քանակը տարեկան 653 մլն տուփից ընկել է՝ հասնելով մինչև 49 մլն տուփի [8]:

Այսպիսով՝ նկատելի է Ադրբեջանի ոչ նավթային սեկտորի ոչնչացումը, ինչին նպաստում է նավթի գների աննախադեպ աճը և նավթի արդյունահանման ծավալի մեծացումն այդ երկրում: Ադրբեջանի կախվածությունը նավթային գործոնից մեծացնում է նաև նրա կախվածությունը միջազգային հումքային սակարաններում նավթի գնից ու այդ գնի հնարավոր տատանումներից: Եվ տարօրինակն այն է, որ ինչքան Բաքուն մեծացնում է արտահանման ծավալները, այնքան մեծանում է նաև նրա կախվածությունը նավթի գների տատանումներից, այսինքն՝ այնքան նրա տնտեսությունն ավելի խոցելի է դառնում, և մեծանում է կախվածությունը նավթի նկատմամբ միջազգային պահանջարկից ու առաջարկից: Նավթային ոլորտում ներդրումների մեծացումը հանգեցնում է այդ երկրի ներքին համախառն արդյունքի աննախադեպ աճին, ինչը, հատկապես, նկատելի է վերջին մի քանի տարիների ընթացքում: Սակայն, չնայած դրան, ներդրումները նավթային ոլորտում քիչ են ազդում երկրի բնակչության կենսամակարդակի վրա, քանի որ այդ ճյուղը, լինելով բավական ֆինանսատար, այսինքն՝ խոշոր ներդրումներ պահանջող, միաժամանակ նաև աշխատատար չէ:

Այսպես, 2002թ. տվյալներով՝ նավթային ոլորտը կազմում էր այդ երկրի ներքին համախառն արդյունքի մոտ 40%-ը, և չնայած դրան՝ այդ բնագավառում աշխատում էր Ադրբեջանի բնակչության ընդամենը 1%-ը [8, c. 76]: Ադրբեջանը վաղուց արդեն վերածվել է, այսպես կոչված, «մեկ տնտեսության» երկրի: Եվ վերջին տարիներին աննախադեպ եկամուտները Ալիևների կլանին հնարավորություն են տվել էլ ավելի ուժեղացնել իր հզորությունը երկրի ներսում՝ կատարելով այն քայլերը, ինչը, սովորաբար, հատուկ է բնական հումքով հարուստ բռնատիրական երկրներին. կրճատելով հարկերը կամ որոշ դեպքերում դրանք ընդհանրապես վերացնելով՝ պետությունը նվազեցնում է բյուջեի ձևավորման գործում երկրի բնակչության ու գործարար խավի դերակատարումը, հետևաբար նաև իր կախվածու-

թյունն այդ շրջանակներից՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով: Դրա փոխարեն իշխանություններն ակնկալում են մեծ մուտքեր նավթի արտահանման ծավալներից և, հետևաբար, կախվածության մեջ են հայտնվում նավթային անդրազգային ընկերություններից, որոնք խոշոր ներդրումներ են կատարում այդ երկրի նավթային տնտեսությունում:

Այսպես, ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի հաշվարկների՝ նավթի գնի անկումը, թեկուզ մեկ դոլարով, նշանակում է, որ Ադրբեջանը տարեկան կկորցնի մոտ $35 մլն [2, c. 124]: Այս հաշվարկներն արվել են 2000թ. համար: Այսօր, երբ Ադրբեջանի արտահանման ծավալները եռակի ավելացել են, իսկ գները՝ մի քանի անգամ բարձրացել, այդ կախվածությունը, հետևաբար՝ նաև կորուստները, էլ ավելի են մեծացել: Այսպես, 2006թ. հուլիսից մինչև 2007թ. հունվար միջազգային սակարաններում նավթի գնի աննախադեպ անկումը՝ մոտ $20-25-ի չափով, Ադրբեջանի տնտեսության համար, ամենահամեստ հաշվարկներով, կնշանակի $2-3 մլրդ-ի կորուստ, այսինքն՝ բյուջեն չի ստանա մինչև $1 մլրդ-ի եկամուտ: Իսկ այդ ծախսերն արդեն հաշվարկված են երկրի 2007թ. բյուջեում, ինչը նշանակում է, որ բացը լրացնելու համար պետությունն ստիպված է լինելու ավելացնել երկրի արտաքին ու ներքին պարտքի ծավալները: Նշենք նաև, որ այս տարի Ադրբեջանում բենզինի, գազի, էլեկտրաէներգիայի, ջրի և առաջին անհրաժեշտության այլ արտադրանքների աննախադեպ թանկացումը կապված է հենց նավթային՝ արդեն փաստ դարձած կախվածության ուժեղացման հետ:

4. Նավթի գների բարձրացումը և քաղաքական համակարգի հզորացումը Ադրբեջանում

Վերջին ամիսներին միջազգային սակարաններում նավթի գնի աննախադեպ բարձրացումը նպաստում է ոչ միայն Ադրբեջանի եկամուտների աճին, այլ նաև Ալիևների կլանի հզորացմանը: Նոյեմբերի 2-ին Նյու Յորքի հումքային սակարանում նավթի գինը հասավ պատմական ռեկորդային մակարդակի. այդ օրը թեթև նավթի մեկ բարելը ավելացավ $2.44-ով և հասավ $96.05-ի, իսկ Լոնդոնի սակարանում Բրենթ կոչվող նավթի գինը հասավ $92.08-ի [9]: Նավթի գների նման աննախադեպ աճին նպաստում են թե՛ ԱՄՆ պատժամիջոցներն Իրանի դեմ, թե՛ Իրաք-Թուրքիա սահմանային լարվածությունը և թե՛ Մեքսիկայի ծոցում մոլեգնող փոթորիկները:

Այսպիսով, կարող ենք ասել, որ նավթի գնի աննախադեպ բարձրացման համար ստեղծվել են հնարավորինս լավ պայմաններ, ինչն էլ նպաստում է հարևան Ադրբեջանում իշխող համակարգի եկամուտների աճին և ոչ ժողովրդավարական քաղաքական համակարգի ձևավորմանը: Փորձագետ-

ները չեն բացառում, որ նման պայմաններում նավթի գինը կանցնի $100-ը՝ այսպիսով սահմանելով պատմական նոր ռեկորդ: Նավթային սեկտորում զարգացման նման միտումներն իրենց հերթին նպաստում են, որ տարեցտարի ավելանան Ադրբեջանում ներդրվող գումարները: Այս գործընթացն էլ, իր հերթին, խթանում է Ադրբեջանից նավթի ծավալների արտահանման մեծացմանը: Միայն այս տարվա առաջին 6 ամիսներին Ադրբեջանն արտահանել է մոտ $8.66 մլրդ-ի նավթ և նավթամթերք [10]: Նշենք, որ արտահանման մեջ գերակշռողը եղել է հում նավթը: Նավթի արդյունահանման աննախադեպ աճը, ինչպես նշեցինք, բերել է ներդրումների ծավալի կտրուկ մեծացման: Սպասվում է, որ մինչև այս տարվա վերջ նավթային սեկտորում ներդրումների ծավալը կանցնի $8 մլրդ-ից: Ըստ այդ երկրի էկոնոմիկայի նախարարի՝ 1995-ից մինչև օրս Ադրբեջանի տնտեսությունում ներդրվել է $42.5 մլրդ [11]: Նշենք նաև, որ անցած տարվա օգոստոսին հումքային սակարաններում գների հերթական աճի ժամանակ ադրբեջանական նավթի գինը հասավ իր պատմական առավելագույնին: Ադրբեջանական, այսպես կոչված, *«Azeri Light»* նավթի մեկ բարելը վաճառվել է $71-ով [12]:

Միջազգային սակարաններում նավթի պահանջարկի անընդհատ աճը և գների բարձրացումն ու Ադրբեջանում նավթային սեկտորի հզորացումը Ալիևների կլանին հնարավորություն է տալիս ուժեղացնել երկրի իշխանական բուրգը: Նոր նավթային եկամուտներն Ադրբեջանին հնարավորություն են տալիս նաև տարեցտարի ավելացնել երկրի բյուջեն: Այսպես, արդեն նախատեսված է, որ 2008թ. բյուջեի եկամտային մասը կկազմի $8.5 մլրդ, իսկ ծախսայինը՝ $9.7 մլրդ [13]: Եվ չնայած միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները շարունակում են պնդել, որ Ադրբեջանում 73 քաղբանտարկյալ կա և զանգվածային կերպով խախտվում են մարդու իրավունքները, Ալիևների կլանն իրեն հանգիստ է զգում՝ ունենալով նաև Արևմուտքի աջակցությունը [14]: Արևմուտքի նման հանդուրժողականությունն Ալիևների կլանի հանդեպ բացատրվում է նավթային գործոնով և հատկապես Բաքու-Ջեյհան նավթամուղի առկայությամբ [15]: Հայտնի է, որ այս նավթամուղը ԱՄՆ-ը ցանկանում է դարձնել Կասպյան նավթի առաքման հիմնական ուղի՝ տարածաշրջանում թուլացնելով ռուսական նավթամուղների և, հետևաբար, Ռուսաստանի ազդեցությունը: Կասպյան նավթի շուրջ ընթացող սուր պայքարն էլ Արևմուտքին ստիպում է Ադրբեջանում ստեղծված և հզորացող բռնատիրական համակարգի հանդեպ հնարավորինս մեղմ լինել: Նման կարծիքը կիսում է նաև ամերիկյան հայտնի վերլուծաբան Արիել Քոհենը: Ըստ նրա՝ Ադրբեջանը Արևմուտքի և հատկապես ԱՄՆ-ի համար կարևոր է նաև որպես Արևմուտք-Արևելք տրանսպորտային

միջանցք, բացի այդ, ԱՄՆ-ը մտադիր է հետագայում այստեղ տեղակայել նոր ռազմակայաններ՝ նվազեցնելով իր կախվածությունը թուրքական Ինջիրլիք ռազմաբազայից [16]: Բացի դրանից, ամերիկյան նավթային ընկերությունները միլիարդների ներդրումներ են կատարել Ադրբեջանի տնտեսությունում, հատկապես նավթային սեկտորում, և Վաշինգտոնը, որը պաշտպանում է անդրազգային նավթային ընկերությունների շահերը, կարիք ունի կայուն քաղաքական համակարգի Ադրբեջանում, իսկ նման կայունություն կարող է ապահովել միայն Ալիևների կլանը:

5. Անդրազգային ընկերությունները և Ադրբեջանի կախվածությունը դրանցից

Արդեն նշել ենք, որ Ադրբեջանում նավթային բումի արդյունքում մեծանում է այդ երկրի կախվածությունը նավթային անդրազգային ընկերություններից, որոնք այսօր, փաստորեն, հսկում են այդ երկրի տնտեսության մեծ մասը: Այսօր «Բրիթիշ փեթրոլիում», «Սթաթոյլ» և միջազգային այլ գերհզոր նավթային ընկերություններ ուղղակիորեն կամ վերահսկողության տակ գտնվող կոնսորցիումների միջոցով իրենց ձեռքում են կենտրոնացրել Ադրբեջանի նավթային սեկտորի ճնշող մեծամասնությունը: Նրանք ոչ միայն վերահսկում են այդ երկրի ամենաեկամտաբեր նավթահորերը, այլ նաև հսկողության տակ են վերցրել Ադրբեջանից նավթի առաքման հիմնական խողովակաշարերը՝ Բաքու-Սուպսան և Բաքու-Ջեյհանը: Այսպես, նշել էինք, որ միայն այս տարվա 6 ամիսների ընթացքում Ադրբեջանից արտահանվել է $8.66 մլրդ-ի նավթ և նավթամթերք: Արտահանվող նավթի առյուծի բաժինը Ադրբեջանական միջազգային օպերացիոն ընկերությանն է (ԱՄՕԸ): Վերջինս արտահանել է $7.7 մլրդ-ի նավ և նավթամթերք: Այս արտահանումից Ադրբեջանի ուղղակի եկամուտը կազմել է $1.2 մլրդ, այն դեպքում, երբ ընկերության արտասահմանյան բաժնետերերին հասել է $6.5 մլրդ-ի եկամուտ [10]:

ԱՄՕԸ կոնսորցիումի հիմնական փայատերերը միջազգային 10 խոշոր նավթային ընկերություններն են՝ *British Petroleum (BP) -34.1%, Unocal-10.3%, LUKOIL- 10%, SOCAR-10%, Statoil- 8.6%, Exxon Mobil- 8%, TPAO-6.7%, Pennzoil-3.6%, ITOCHU-3.9%, Delta/Hess-2.7%* [17]: Ասենք, որ այս ընկերության տնօրինմանն է հանձնվել նաև Ադրբեջանի նավթի ամենաեկամտաբեր հանքավայրը՝ Չիրաք-Գյունեշլին: Նշենք նաև, որ «Բրիթիշ փեթրոլիումը» վերահսկում է Բաքու-Ջեյհան նավթամուղը: Բրիտանական այդ ընկերությունը Բաքու-Ջեյհանի հիմնական օպերատորն է, և նրան է պատկանում բաժնետոմսերի 30.1%-ը [18]: Ադրբեջանի պետական նավ-

թային ընկերության ակտիվներն այս ընկերությունում կազմում են ընդամենը 25%, փաստորեն՝ մնացած բաժնետոմսերն անդրազգային այլ ընկերությունների վերահսկողության տակ են գտնվում:

Նույն վիճակն է տիրում նաև Ադրբեջանի ամենահեռանկարային համարվող գազի միակ հանքավայրում՝ Շահդենիզում: Այս հանքավայրը շահագործում է «Շահդենիզ հանքավայրի պայմանագիր» ընկերությունը, որի փայաբաժնի հիմնական անդամներն են «Բրիթիշ փեթրոլիումը»՝ 25.5%, վերջինս նաև այս համաձայնագրի օպերատորն է, «Սթաթոյլը»՝ 25.5%, «Լուկոյլը»՝ 10%, «Նիկոն»՝ 10%, «Թոթալը»՝ 10% և «Թպաօն»՝ 10%, իսկ Ադրբեջանի նավթային պետական ընկերությունն ունի ընդամենը բաժնետոմսերի 10%-ը [19]: Ադրբեջանական նավթը միջազգային շուկա դուրս բերելու համար կառուցվել է Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը: Այս գազամուղը շահագործում «Հարավկովկասյան խողովակաշար» կոչվող ընկերությունը, որի հիմնական փայատերը նույնպես բրիտանական «Բրիթիշ փեթրոլիումն» է, որը նաև պատասխանատու է այս խողովակաշարի կառուցման և շահագործման համար: Նշենք, որ «Բրիթիշ փեթրոլիումը» վերահսկում է այս ընկերության ակտիվների 25.5%-ը, նախագծի երկրորդ օպերատորը՝ նորվեգական «Սթաթոյլը», որը պատասխանատու է ծրագրի առևտրային կողմի համար, նույնպես ունի ակտիվների 25.5%-ը, իսկ Ադրբեջանի նավթային պետական ընկերությանը պատկանում է այս խողովակաշարի փայաբաժնի միայն 10%-ը [19]:

Այսպիսով, բրիտանական «Բրիթիշ փեթրոլիումը» և նորվեգական «Սթաթոյլը» վերահսկում են ոչ միայն Շահդենիզի հանքավայրը, այլ նաև այն խողովակաշարը, որով ադրբեջանական նավթը պետք է հոսի դեպի Թուրքիա և ապա Եվրոպա: Ադրբեջանի տնտեսության և ընդհանրապես այդ պետության կախվածությունը նավթային սեգմենտից դառնում է կրիտիկական: Այդ երկրի պետական բյուջեի 50%-ը հավաքագրվում է ընդամենը նավթային երկու՝ Պետական նավթային և ԱՄՕ ընկերություններից: Այս ընկերությունները միասին մուծում են նաև պետական հարկերի 75%-ը [20]: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Ադրբեջանը, անցնելով հումք արտահանող երկրների «ճանապարհով», ամբողջովին կախման մեջ է հայտնվել անդրազգային ընկերություններից, որոնք վերահսկում և կառավարում են այդ երկրի նավթի և գազի սեկտորները: Այսինքն՝ Ադրբեջանը, կարող ենք ասել, դառնում է Արևմուտքի հումքային կցորդը, ինչը, իր հերթին, ապահովում է Ալիևների կլանի երկարատևությունն այդ երկրի իշխանության բուրգում:

Հետևություն

Ամփոփելով նշենք, որ միջազգային սակարաններում նավթի գների անընդհատ բարձրացումը, նավթի արդյունահանման և արտահանման ծավալների մեծացումը, եկամուտների աննախադեպ աճն այդ հարստություններով հարուստ երկրներում բերում է.

ա. նավթային տնտեսության ոլորտի աննախադեպ աճի և որպես հետևանք տնտեսության մյուս ճյուղերի սնանկացման,

բ. ներքաղաքական համակարգում գործադիր իշխանության հզորացման և նրա կախվածության թուլացմանը ներքաղաքական զարգացումներից,

գ. պետական կառուցվածքային համակարգի կարևորագույն ճյուղերից մեկի՝ հարկահավաքության ինստիտուտի ոչնչացման՝ վերջինիս անհրաժեշտության բացակայության պատճառով,

դ. որպես հետևանք կախվածության մեծացմանը հումքի արտահանումից ստացվող եկամուտներից,

ե. որպես հետևանք անդրազգային ընկերությունների դերի ու ազդեցության մեծացմանն այդ երկրների տնտեսական և քաղաքական համակարգերի վրա,

զ. կախվածության մեծացմանը միջազգային նավթային սակարաններում նավթի գների տատանումներից:

Եվ այսպես՝ վերը նշված 6 հիմնական մոտեցումները թույլ չեն տալիս պետական համակարգերի ձևավորմանը և, որպես կանոն, նմանատիպ երկրների կայացմանը՝ որպես ինքնուրույն քաղաքական սուբյեկտ միջազգային քաղաքական համակարգում: Այս իրավիճակը, հատկապես, վտանգավոր է նորաստեղծ պետությունների համար, որոնց այն տանում է դեպի բոնատիրական համակարգի ձևավորում: Եթե նավթային հզոր պաշարներ ունեցող երկրները դեռ ի վիճակի են այս հարցերը լուծել և հաղթահարել ժամանակ առ ժամանակ նավթի գների անկման պայմաններում առաջացած ճգնաժամերը, ապա նավթի փոքր պաշար ունեցող երկրները, ինչպիսիք են Կասպյան տարածաշրջանի պետությունները, դառնում են էլ ավելի խոցելի և նրանց կախվածությունն անդրազգային նավթային ընկերություններից ու հումքային սակարաններում նավթի գներից էլ ավելի է մեծանում:

Նոյեմբեր, 2007թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Ross M.L.,* 1961-«Does Oil Hinder Democracy?» World Politics - Volume 53, # 3, April 2001, http://muse.jhu.edu/demo/world_politics/
2. *Цалик С.,* Каспийские нефтяные доходы: Кто окажется в выигрыше? New York 2003 Caspian Revenue Watch.
3. *Ross M.,* Oil, Drugs, and Diamonds: How Do Natural Resources Vary in their Impact on Civil War?... http/www.polisci.ucla.edu/faculty/ross/OilDrugs.pdf.
4. *M.,* Oil, Drugs, and Diamonds: How Do Natural Resources Vary in their Impact on Civil War?... http/www.polisci.ucla.edu/faculty/ross/OilDrugs.pdf. peg. 2
5. *Терри К.,* «Парадокс изобилия: нефтяные бумы и нефтедобывающие государства» // Калифорнийский Университет, 1997.
6. ИА REGNUM «Новости», Иностранные компании вложили в нефтяную промышленность Азербайджана $13,6 млрд. 27.09.2005.
7. ИА REGNUM «Новости», Азербайджанские нефтяники… Азербайджанские нефтяники увеличили добычу нефти и газа. 31.01.2006
8. Ежегодный статистический справочник Азербайджана, 2002.
9. BBC NEWS: *Supply fears puts oil at new high.,* Published: 2007/11/02 http://news.bbc.co.uk/go/pr/fr/-/2/hi/business/7074589.stm
10. ИА REGNUM «Новости», За полугодие Азербайджан экспортировал нефти и нефтепродуктов на 8,66 млрд долл. www.regnum.ru/news/887181.html. 19.09.2007.
11. ИА REGNUM «Новости», В экономику Азербайджана инвестировано $42,5 млрд.: www.regnum.ru/news/908044.html. 31.10.2007.
12. ИА REGNUM «Новости», Азербайджанская нефть реализована по цене 71 долл. за баррель. www.regnum.ru/news/835046.html. 29.05.2007.
13. ИА REGNUM «Новости», Предел дефицита госбюджета Азербайджана на 2008 год предусматривается на уровне $1,408 млрд., www.regnum.ru/news/900832.html. 17.10.2007.
14. ИА REGNUM «Новости», В Азербайджане 73 политзаключенных. www.regnum.ru/news/907777.html
15. The Economist Newspaper Limited, *A watermelon revolution? Azerbaijan and democracy* London. Friday, July 08, 2005.
16. *Cohen A., Securing the Democratic Transition in Azerbaijan.* Executive Memorandum #886. June 18, 2003. http://www.heritage.org/Research/RussiaandEurasia/EM886.cfm
17. *Муталибов А.,* «Черное золото» так и не превратилось в «нефтедолларовый дождь» // «Мировая энергетическая политика», 14 мая 2002 http://www.opec.ru/expert.asp?ex_no=57
18. *Махмудов Э., Зыгарь М.,* «КоммерсантЪ»., С горючим революционным приветом. Каспийская нефть заполняет трубопровод Баку–Джейхан, 2005.
19. ИА REGNUM «Новости», BP и «Статойл» объявили о начале добычи коммерческого газа на "Шахдениз" (Азербайджан),. www.regnum.ru/news
20. ИА REGNUM., В 2007 году в бюджет Азербайджана от нефти поступит 3,059 млрд. долларов., www.regnum.ru/news/780393.html 09.02.2007

ЭНЕРГЕТИЧЕСКИЕ РЕСУРСЫ И ИХ «РОЛЬ» В ФОРМИРОВАНИИ ПОЛИТИЧЕСКИХ СИСТЕМ

Армен Манвелян

Резюме

Южный Кавказ, бассейн Каспийского моря и Средняя Азия уже давно находятся в центре внимания глобальной политики. Как правило, Запад воспринимает эти территории как единую, неделимую цепочку, которой можно управлять только в совокупности всех ее звеньев. В этом контексте особенно большое значение обретает фактор нефти и газа. Именно контроль над энергетикой рассматривается сверхдержавами в качестве средства установления контроля над регионом. Понятно, что в этих условиях страны региона, особенно экспортирующие нефть и газ, пытаются усилить собственную роль в своей региональной борьбе. В этом контексте особое значение обретает изучение достижений научной мысли относительно мировой политики в области нефти и энергетической сферы в целом. Только в этом случае мы сможем дать четкий ответ на то, по каким политическим правилам ведется эта игра, которая называется «борьбой за контроль над нефтяными потоками».